

**ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ԻՆՍԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

«Հաստատում եմ»

ՎՊՄԻ ռեկտոր, բ.գ.դ. պրոֆեսոր  
Գ.Խաչատրյան

“\_27\_\_” \_\_05\_\_ 2011թ.

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ԻՆՍԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՂԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ**

Քննարկվել և ընդունվել է ՎՊՄԻ գիտխորհրդում  
(արձանագրություն թիվ 5 “\_27\_\_” \_\_05\_\_ 2011թ.)

## **1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1. Սույնով սահմանվում է «Վաճառքորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (այսուհետ՝ «Ինստիտուտ») հասարակական աշխատանքների գնահատման կարգը (այսուհետ՝ «Կանոնակարգ»):
- 1.2. Հասարակական աշխատանք է համարվում ինստիտուտում հիմնական աշխատանքից դուրս, չվճարվող և աշխատանքային պայմանագրով չնախատեսված աշխատանքը:
- 1.3. Ինստիտուտում հասարակական աշխատանքների գնահատման համար համապատասխան ցուցանիշներն արձանագրվում են ուսումնական ողջ տարվա ընթացքում:
- 1.4. Հասարակական աշխատանքների ամփոփման ավարտին համապատասխան ցուցանիշներ ունեցող աշխատակիցները խրախուսվում են:
- 1.5. Սույն կանոնակարգը հաստատվում, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարվում են ինստիտուտի ռեկտորի ներկայացմամբ՝ ինստիտուտի գիտական խորհրդի որոշման համաձայն:

## **2. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՅԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ**

- 2.1. Ինստիտուտի հասարակական աշխատանքների գնահատումը կազմակերպելու և անցկացնելու համար ստեղծվում է հանձնաժողով:
- 2.2. Հանձնաժողովի կազմի մեջ մտնում են ինստիտուտի ռեկտորը (հանձնաժողովի նախագահ), ռեկտորի խորհրդականները, արհեկոմի նախագահը, ֆակուլտետային ավագ խորհրդատունները, բուհ-դպրոց կապի պատասխանատուն, կենտրոնների ղեկավարները, ՈՒԳԸ նախագահը:

Հանձնաժողովի քարտուղարն ընտրվում է հանձնաժողովի կազմից:

- 2.3. Հանձնաժողովը քննարկում է ներկայացված թեկնածությունները և ոչ ուշ, քան աշխատանքային 10 օրվա ընթացքում թեկնածուների ճշգրտված ցուցակը ներկայացնում է ինստիտուտի գիտական խորհրդի հաստատամանը:

## **3. ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՏԵԼՈՒ ՀԱՍԱՐԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ ԱՊԱԶԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

- 3.1. Հասարակական աշխատանքների գնահատման համար յուրաքանչյուր ստորաբաժանման ղեկավար հանձնաժողովին է ներկայացնում թեկնածուներին՝ նրանց կատարած աշխատանքների նկարագրմամբ, հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:
- 3.2. Կարգապահական տույժեր ունեցող աշխատողները խրախուսման չեն ներկայացվում:

## **4. ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՅԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՀԱՍԿԱՐԳԸ**

- 4.1. Ներկայացված թեկնածուներից լավագույններին ընտրելու գործընթացում հանձնաժողովը հիմք է ընդունում.

ա) հասարակական ակտիվությունը՝ ֆակուլտետային, համախնատիտուտային միջոցառումների, կլիր սեղանների, քննարկումների, հանդիպումների կազմակերպումը,

բ) անդամակցությունը ինստիտուտում գործող կենտրոնների հետ՝ մշակույթի, ռազմահայրենասիրական, գիտելիքի, որակի ապահովման,

սպորտային խմբերի, ՎՊՄԻ-ի արհեկոմի, ուսանողական գիտական ընկերության, ուսանողական խորհրդի, գիտական, մանկավարժության և հոգեբանության, լրագրության, պատմության և այլ կարինետների հետ,  
 գ) խորհրդատունների կատարած աշխատանքները՝ ըստ սահմանված կարգի,  
 դ) գիտահետազոտական աշխատանքները (ատենախոսությունների պաշտպանություններ, հոդվածների, աշխատությունների տպագրություն և այլն),  
 ե) բուհի օգագացման ուղիների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,  
 զ) ուսանողական հասարակական ակտիվությունը խթանող գործողություններ՝ միջոցառումների, ճանաչողական, դաստիարակչական էքսկուրսիաների, արշավների կազմակերպում,  
 է) տարատեսակ մարդասիրական, սոցիալական և այլ ակցիաների կազմակերպում,  
 ը) բազմաբովանդակ մրցույթների կազմակերպում:

<b>Աշխատանքի բովանդակությունը</b>	<b>Միավոր</b>	<b>Նշումներ կատարման մասին</b>
1.Ֆակուլտետային, համախմստիտուտային միջոցառումների, կլոր սեղանների, քննարկումների, հանդիպումների կազմակերպում	մինչև 10 միավոր	
2.Համագործակցություն ինստիտուտում գործող կենտրոնների, կարինետների, արհելոնի, ՈՒԳԸ, ուսխորհրդի, լրատվության և այլ բաժինների հետ	մինչև 10 միավոր	
3.Խորհրդատունների կատարած աշխատանքներ	մինչև 10 միավոր	
4.Ուսանողական հասարակական ակտիվությունը խթանող գործողություններ՝ միջոցառումների, ճանաչողական, դաստիարակչական էքսկուրսիաների, արշավների կազմակերպում	մինչև 10 միավոր	
5.Տարատեսակ մարդասիրական, սոցիալական և միջոցառումների	մինչև 10 միավոր	

կազմակերպում և այլ աշխատանքներ		
6.Բուհ-դպրոց կապի ուղղությամբ կատարվող աշխատանքներ	մինչև 10 միավոր	